Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին **21.02.2024թ. թիվ 2417953378** որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<<11>>03 2024թ. 24-5-2321 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ն.Սարգսյանս, վերանայելով **Հայկ Հակոբյանի ՄԴ/19009-24** դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շահամիրյանների փողոցի 3 շենքի 521 բնակարանի բնակիչ Հայկ Հակոբյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին **թիվ 2417953378** որոշումը՝ նշելով իր անհամաձայնությունը կայացված որոշման վերաբերյալ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին **թիվ 2417953378** որոշումը ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ:

Իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում, իսկ կասկածի դեպքում մեկնաբանվում է հօգուտ անձի:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին վերը նշված որոշման իրավախախտումն ամրագրած տեսանյութի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում իրավախախտման փաստի առկայությունը համարվել է կասկածելի (թերի տեսանյութ):

Այսպիսով, վարչական վարույթի ընթացքում հիմնավորվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ վերը նշված որոշումը ենթակա է բեկանման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին **21.02.2024թ. թիվ 2417953378** որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել **Հայկ Հակոբյանին**:

Ն. Սարգսյան

Կատարող՝ Մ. Ավագյան
Հեռ. 060 83 84 02